

## Մեր հանգանակութիւնը

«Հայաստանի Հնութեանց Պահպանութեան Կոմիտէ»ին գործունէութեան համեստ աջակցութիւն մը բերելու համար, հանգանակութիւն մը բացած ենք: Հանգանակիչ Մարմինը կը կազմուի հետեւեալ անձերէն. Տիգրան խան Քէլէկեան, նախագահ, Տօքթ. Յ. Արքինեան, Տիկ. Անայիս, Օր.Մ. Բաբայեան, Տիկ. Մարի Կիւլպէնկեան, Պ. Պ. Յ. Ապտալեան, Կ. Բաւմաջեան, Տ. Բուդաղեան, Վ. Մալեգեան, Ե. Մանուէլեան, Վ. Մեսրոպեան, Ա. Զօպանեան, Ա. Սազրգեան, Յ. Սարանեան, Տօքթ. Մ. Քէշիշեան, Տօքթ. Պ. Քօլօլեան:

Անահիտի անցեալ թիւով հրատարակած էինք նուիրատուութեանց առաջին ցանկը որ կը հասնէր 2920 ֆրանքի: Անկից ի վեր ստացուած են հետեւեալ գումարները, Յ. Սարանեան, 200 ֆր. Հրանտ Համամեան, 200 ֆրանք, Գ. Բարունակեան, 20 ֆր., Հայկ Անէմեան, 20 ֆրանք, Առաքել Զաքրեան, 25 ֆրանք:

Այդ բազմարդիւն Կոմիտէն, ինչպէս մեր ընթերցողները պիտի իմանան մեր այս թիւի առաջին յօդուածէն, այժմ միացած է «Հայաստանի Կուլտուրայի Պատմութեան Ինստիտուտ»ին (որ երեւանի մշակութային կարեւորագոյն հիմնարկութիւններէն մին է) եւ անոր մէկ բաժինը կը կազմէ: «Ինստիտուտ»ին լնդհանրապէս եւ «Հնութ. Պահպ. Կո-

միտէ»ին մասնաւորապէս վերջերս կատարած գործերուն մասին շահեկան ու ոգեւորիչ տեղեկութիւններ տուած ենք մեր այս թիւի առաջին յօդուածով:

Յանկալի է որ մեր ընթերցողներէն շատեր մասնակցին այս հանգանակութեան: «Ինստիտուտ»ին կատարած գործը հայագիտական ուսումնասիրութեանց համար թանկագին է եւ պէտք է շահագրգռէ ոեւէ ազգասէր Հայ: Մասնակցիլ փափափողները պէտք է սպասեն որ իրենց մարդ ղրկուի՝ իրենցմէ նուէր մը խնդրելու կամ նուէրն ստանալու համար. ֆրանսական լրագիրներուն մէջ յաճախ այսպիսի հանգանակութիւններ կը բացուին, եւ հարիւրաւորներ կը փութան իրենց նուէրը փօսքով ուղարկել. ատեն է որ այդ օրինակին հետեւին եւ մերոնք: Անհրաժեշտ չէ կարելոր գումարներով միայն մասնակցիլ հանգանակութեան. ամենէն համեստ գումարներն ալ սիրով կ'ընդունուին:

Նուէրները պէտք է ղրկել մեր գանձապահին, հետեւեալ հասցէով.

Docteur J. Artignan  
111, Avenue de L'Union  
Arnouville - lès - Gonesse (S. et O.)  
France

Chèques postaux Rouen №9888